



IASP 2025 Համաշխարհային Տարվա ներածություն. Ցավի Կառավարման, Հետազոտությունների և Կրթության Մասին՝ Փոքր և Միջին Եկամուտ ունեցող միջավայրերում

Հեղինակներ՝

- Մարգարիտա Կալվո, PhD, Պապական Կաթոլիկ Համալսարան Չիլի, Չիլի
- Սաուրաբ Շարմա, PhD, Ռոյալ Նորթ Շոր Հիվանդանոց, Ավստրալիա

Ներածություն:

IASP 2025 Համաշխարհային Տարվա թեման է. «Ցավի Կառավարում, Հետազոտություններ և Կրթություն Ցածր և Միջին Եկամուտ ունեցող միջավայրերում»: Վերոնշյալ թեման ընդգրկում է ոչ միայն ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներն (ՑՄԵԵ), այլև անբարենպաստ պայմաններում բնակվողներին ու այլ թիրախային խմբերին, ինչպիսիք են օրինակ տեղաբնիկ ժողովուրդները, մշակութային բազմազան խմբերը և փախստականները բարձր եկամուտ ունեցող երկրներում: «Ցածր և միջին եկամուտ ունեցող պայմանների» վրա կենտրոնանալով՝ մենք ընդունում ենք, որ սոցիալ-տնտեսական դժվարություններն ու անհավասարություններն առկա են բոլոր տարածաշրջաններում և առողջապահական համակարգերում: Այս մոտեցումը շեշտը աշխարհագրական դիրքից տեղափոխում է համատեքստի վրա՝ նպաստելով ավելի ներառական ջանքերի՝ խոչընդոտները հասկանալու և ցավի կառավարման արդյունավետ մեթոդներ մշակելու համար: Նախաձեռնությանը միացել են 24 երկրներից ընտրված 35 մասնագետներ, որոնցից շուրջ 60%-ը ներկայացնում է ցածր և միջին եկամուտ ունեցող երկրները:

Նպատակներ:

2025 թվականի Համաշխարհային տարին կանդրադառնա ցավի և միջին եկամուտ ունեցող պայմաններում ցավի հաղթահարման առկա դժվարություններին և հնարավորություններին:

Այն կոչ կանի ավելացնել ֆինանսավորումը բարձրորակ հետազոտությունների համար, որոնք կլրացնեն կարևոր հետազոտական բացերը, բարելավել բուժաշխատողների կրթությունը՝ ցավի բուժումը կատարելագործելու նպատակով, և ցավի բարձրակարգ կառավարման հասանելիությունը մեծացնելուն: Բացի այդ, 2025 Համաշխարհային տարին նպատակ ունի բարելավել բժիշկների վերապատրաստումը ցավի վերաբերյալ, խթանել ինքնավար ցավի կառավարումն իրազեկող մոտեցումները և խրախուսել միջդիսցիպլինար և բազմադիսցիպլինար մոտեցումները քրոնիկական ցավի բուժման համար: Մենք հույս ունենք, որ նախաձեռնությունը կօգնի նպաստել արդարության ամրապնդմանը՝ թե՛ տեղական համայնքներում, թե՛ գլոբալ մակարդակում:¹

Ինչո՞ւ կենտրոնանալ ցավի և միջին եկամուտ ունեցող պայմանների վրա.

Ամբողջ աշխարհում ցավը լուրջ հանրային առողջապահական խնդիր է, որի բեռը անհամաչափ ծանր է հատկապես ցավի և միջին եկամուտ ունեցող երկրներում (ՑՄԵԵ), և բարձր եկամուտ ունեցող երկրների խոցելի խմբերում:^{2,3} Հետագա տասնամյակներում կանխատեսվում է, որ ցավի հետ կապված հաշմանդամության բեռը զգալիորեն կաճի հենց ՑՄԵԵ-ում:^{4,5} Չնայած այն հանգամանքին, որ ՑՄԵԵ-ն կազմում են աշխարհի բնակչության ավելի քան 4/5-ից ավելին, այս տարածաշրջաններում ցավի կառավարման բարելավմանն ուղղված գիտական հետազոտությունների ծավալը դեռևս անբավարար է:⁶

Օրինակ՝ 2017 թվականի հիվանդությունների համաշխարհային բեռի ուսումնասիրությունների ժամանակ շատ ՑՄԵԵ-ների վերաբերյալ բացակայում էին սկզբնաղբյուրային տվյալներ, և որոշ տարածքներում տվյալները՝ օրինակ՝ ստորին մեջքի ցավի տարածվածության վերաբերյալ, փոխառված էին այլ տարածաշրջաններից:⁷

Մի շարք զգալի հիմնախնդիրներ խոչընդոտում են ցավի վերաբերյալ բարձրորակ գիտական հետազոտությունների իրականացումը ՑՄԵԵ-ում, և հենց այս խոչընդոտների հաղթահարմանն է միտված 2025 թվականի համաշխարհային տարվա աշխատանքային խմբի գործունեությունը: Այս հիմնախնդիրներից են ազգային և ինստիտուցիոնալ մակարդակներում հետազոտությունների առաջնահերթության բացակայությունը, գիտական համայնքում, կլինիկական ոլորտում և ընդհանրապես հասարակության շրջանում ցավի վերաբերյալ իրազեկվածության սահմանափակ լինելը և հետազոտությունների ֆինանսավորման սղությունը:^{6,8} Բացի այդ, գրեթե չկան ցավի հետազոտությանը նվիրված մասնագիտական հաստիքներ կամ համապատասխան պատրաստվածություն ունեցող հետազոտողներ: Լեզվական խոչընդոտները նույնպես զգալիորեն սահմանափակում են թե՛ տվյալների հավաքագրման, թե՛ միջազգային հրապարակումների հնարավորությունները: Այս բոլոր հանգամանքների արդյունքում՝ շատ գիտնականներ դառնում են գիշատիչ հրատարակչությունների թիրախ, ինչը հերթական հարվածն է ցավի հետազոտության հեղինակավորությանն ու վստահելիությանը:^{6,9,10}

Բազմաթիվ ՑՄԵԵ-ներում ցավի կառավարման հարցերը հաճախ մնում են ուշադրության կենտրոնից դուրս՝ առողջության ոլորտում առկա այլ հրատապ խնդիրների առկայության պատճառով, ինչպիսիք են՝ վնասվածքները, մոր և մանկան առողջության հետ կապված դժվարությունները, ինչպես նաև վարակիչ հիվանդությունները: Առկա խնամքը շատ դեպքերում չի համապատասխանում միջազգային որակական չափանիշներին. այն կարող է լինել ոչ արդյունավետ, ոչ անվտանգ, և ֆինանսապես ծանրաբեռնող: Որոշ տարածքներում կիրառվում են վնասակար ու ապացուցողական հիմք չունեցող մեթոդներ, ինչպես օրինակ՝ արյունառություն:¹³ Այնուամենայնիվ, կան տեղական և ավանդական բուժման մեթոդներ փորձարկելու հնարավորություններ, որոնք կարող են բարելավել ցավով ապրող մարդկանց կյանքի որակը: Այս բացերը լրացնելը կարևոր է առողջապահական անհավասարությունները նվազեցնելու ՑՄԵԵ բնակվող

միլիարդավոր մարդկանց կյանքի որակը բարելավելու համար:

2025 թվականի Համաշխարհային տարին կենտրոնանում է նաև բարձր եկամուտ ունեցող երկրների խոցելի խմբերի վրա, որոնց թվում են տեղաբնիկները, միգրանտները, տարբեր մշակութային ծագում ունեցող մարդիկ և փախստականները:¹⁴ Շատերը ՑՄԵԵ-ներից ստիպված են գաղթում՝ աշխատատեղերի բացակայության, աղքատության, որակյալ առողջապահական ծառայությունների հասանելիության պակասի կամ հակամարտությունների հետևանքով: Նոր երկրներում նրանք հաճախ բախվում են սոցիալական մեկուսացման, ոչ բավարար բուժօգնության և առողջական վատ արդյունքների հետ: Լեզվական խոչընդոտները ևս մեծապես սահմանափակում են այդ խմբերի ներգրավումը կլինիկական հետազոտություններում՝ կասկածի տակ դնելով արդյունքների ընդհանրացման հնարավորությունը: Չնայած այս խնդիրների ակնհայտ բնույթին՝ դրանց լուծմանն ուղղված միջազգային ջանքերն առայսօր բավարար չեն եղել: 2025 թվականի Համաշխարհային տարվա կենտրոնացումը այս խոցելի խմբերի վրա կարևոր քայլ է՝ ցավի կառավարման ոլորտում գլոբալ արդարության ապահովման ուղղությամբ:

Արդյունք.

Նախաձեռնության արդյունքներն են՝ տեղեկատվական թերթիկներ, փողքաստներ, վեբինարներ և փորձագետների հետ հարցազրույցներ: Առաջադրվելու և ընդգծվելու են նաև ոլորտին առնչվող կարևոր գիտական հոդվածներ PAIN և PAIN Reports գիտաժողովներում և հրատարակություններում: Մենք կողջունենք տեղեկատվական թերթիկների թարգմանության հարցում ցուցաբերվող աջակցությունը բազմաթիվ լեզուներով՝ համաշխարհային ցավի համայնքին ներգրավելու և ապահովելու համար դրանց հասանելիությունը լայն հանրության, բժիշկների, հետազոտողների և քաղաքականություն մշակողների համար ամբողջ աշխարհում:

Միացնք IASP-ին՝ անդրադառնալու այս կարևոր համաշխարհային մարտահրավերին

2025 Համաշխարհային Տարին համախմբում է կլինիկական ոլորտի մասնագետներին, հետազոտողներին, քաղաքականություն մշակողներին և հիվանդների իրավունքների պաշտպաններին

ամբողջ աշխարհում՝ ցածր և միջին եկամուտ ունեցող պայմաններում նպատակ ունենալով բարելավել ցավի բարձրորակ խնամքի հասանելիությունը:

Ազգերի ու մասնագիտությունների սահմանները հատելով՝ մենք կարող ենք արմատապես փոխել ցավի խնամքի մոտեցումները և պայքարել գլոբալ անհավասարությունների դեմ: Այս նախաձեռնությունն առավել քան երբևէ կարևոր հնարավորություն է՝ ուշադրություն հրավիրելու անտեսված տարածաշրջանների վրա, լսելի դարձնելու խիստ կարևոր ձայները և խթանելու կայուն փոփոխություններ ցավի կառավարման, կրթության և հետազոտությունների ոլորտներում:

Author Affiliations

1. Co-chair, Global Year for Pain Management, Research and Education in Low- and Middle-Income Settings, International Association for the Study of Pain, Washington DC, USA
2. Physiology Department, Pontificia Universidad Católica de Chile, Santiago, Chile; Millennium Nucleus for the Study of Pain (MiNuSPain), Santiago, Chile.
3. Chief Scientist for Clinical Research, Pain Management and Research Centre, Royal North Shore Hospital, Northern Sydney Local Health District, Sydney, NSW 2065, Australia
4. Conjoint Senior Lecturer, Pain Management Research Institute, Kolling Institute, Faculty of Medicine and Health, The University of Sydney and Northern Sydney Local Health District, Sydney, NSW, Australia
5. Adjunct Senior Lecturer, School of Health Sciences, Faculty of Medicine and Health, University of New South Wales, Sydney, Australia
6. Postdoctoral Research Fellow, Centre for Pain IMPACT, Neuroscience Research Australia, Sydney, Australia
7. Visiting Faculty, Department of Physiotherapy, Manipal Academy of Higher Education, Manipal University, Manipal, India

Fact Sheet Reviewers

- Emma Karran, BSc PT, PhD, University of South Australia, Australia
- Supranee Niruthisard, MD, Chulalongkorn University, Thailand
- Andrew Rice, PhD, Imperial College London, UK

Translated from English by:

Nare Navasardyan, MSc, ISPUP, Portugal (Armenia)

References:

1. Cardosa MS. Promoting multidisciplinary pain management in low- and middle-income countries—challenges and achievements. *Pain*. 2024;165(11S):S39-S49.
2. Alva Staufert MF, Ferreira GE, Sharma S, Gutierrez Camacho C, Maher CG. A look into the challenges and complexities of managing low back pain in Mexico. *Glob Public Health*. Jun 2021;16(6):936-946. doi:10.1080/17441692.2020.1808038
3. Sharma S, McAuley JH. Low Back Pain in Low- and Middle-Income Countries, Part 1: The Problem. *J Orthop Sports Phys Ther*. May 2022;52(5):233-235. doi:10.2519/jospt.2022.11145
4. Ferreira ML, de Luca K, Haile LM, et al. Global, regional, and national burden of low back pain, 1990–2020, its attributable risk factors, and projections to 2050: a systematic analysis of the Global Burden of Disease Study 2021. *The Lancet Rheumatology*. 2023;5(6):e316-e329.
5. Gill TK, Mittinty MM, March LM, et al. Global, regional, and national burden of other musculoskeletal disorders, 1990–2020, and projections to 2050: a systematic analysis of the Global Burden of Disease Study 2021. *The Lancet Rheumatology*. 2023;5(11):e670-e682. doi:10.1016/s2665-9913(23)00232-1
6. Sharma S, Verhagen AP, Elkins M, et al. Research from low-income and middle-income countries will benefit global health and the physiotherapy profession, but it requires support. *J Physiother*. Jan 2024;70(1):1-4. doi:10.1016/j.jphys.2023.08.013
7. Tamrakar M, Kharel P, Traeger A, Maher C, O’Keeffe M, Ferreira G. Completeness and quality of low back pain prevalence data in the Global Burden of Disease Study 2017. *BMJ Glob Health*. May 2021;6(5):e005847. doi:10.1136/bmjgh-2021-005847
8. Sharma S, Birnie KA, Wang S, Fernandes Gomes FI, Gibbs JL, Mittinty MM. The value of the International Association for the Study of Pain to career development: perspectives of trainee and early career members. *Pain*. Nov 1 2023;164(11S):S31-S38. doi:10.1097/j.pain.0000000000003061
9. Amano T, Rios Rojas C, Boum li Y, Calvo M, Misra BB. Ten tips for overcoming language barriers in science. *Nat Hum Behav*. Sep 2021;5(9):1119-1122. doi:10.1038/s41562-021-01137-1
10. Network TE-P, O’Connell NE, Belton J, et al. Enhancing the trustworthiness of pain research: A Call to Action. *The Journal of Pain*. 2024;104736.
11. Briggs AM, Huckel Schneider C, Slater H, et al. Health systems strengthening to arrest the global disability burden: empirical development of prioritised components for a global strategy for improving musculoskeletal health. *BMJ Global Health*. 2021-06-01 2021;6(6):e006045. doi:10.1136/bmjgh-2021-006045
12. Briggs AM, Jordan JE, Sharma S, et al. Context and priorities for health systems strengthening for pain and disability in low- and middle-income countries: a secondary qualitative study and content analysis of health policies. *Health Policy Plan*. Feb 13 2023;38(2):129-149. doi:10.1093/heapol/czac061
13. Sharma S, Pathak A, Parker R, et al. How low back pain is managed—a mixed methods study in 32 countries. Part 2 of Low Back Pain in Low- and Middle-Income Countries Series. *Journal of Orthopaedic & Sports Physical Therapy*. 2024;
14. Lin I, Goucke R, Bullen J, Sharma S, Barnabe C. Inequities in pain: pain in low- and middle-income countries and among Indigenous peoples. In: van Griensven H, ed. *Pain: A textbook for health professionals*. 2023:353.